ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆԻ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Դավիթ Միրզոյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Արաբական Միացյալ Էմիրություններ՝ ք. Դուբայ, 2025թ. ապրիլի 6-ից 10-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

«Սերվիս Սոֆթ Էյ» ՍՊ ընկերություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Դուբայի Համաշխարհային առևտրի կենտրոնում անցկացվող էներգետիկ ոլորտի Միդլ Իսթ Էներջի (Middle East Energy) 2025 միջոցառմանը (այսուհետ՝ Միջոցառում):

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Միջոցառման շրջանակներում ծանոթացա էլեկտրաէներգետիկական ոլորտի միջազգային ընկերությունների տաղավարներին, նրանց կողմից առաջարկվող տեխնոլոգիական նորարարական լուծումներին և դրանց կիրառման հնարավորություններին: Միջոցառման շրջանակներում կայացել են հանդիպումներ էներգետիկ ոլորտի միջազգային մի շարք ընկերությունների, այդ թվում՝

- ✓ մեկուսիչներ արտադրող առաջատար Dewopower ընկերության ներկայացուցիչների հետ,
- ✓ էլեկտրահաղորդման գծերի հենարանների արտադրությամբ զբաղվող Skipper Limited ընկերության ներկայացուցիչների հետ,
- ✓ Sichuan Huiyuan Optical Communications Co., Ltd ընկերության ներկայացուցիչների հետ: Նշված ընկերությունն ապահովում է բարձրակարգ օպտիկամանրաթելային մալուխ և էլեկտրահաղորդման գծի վերգետնյա մոնիթորինգի համակարգ ամբողջ աշխարհում, ընդ որում՝ որպես բարձր տեխնոլոգիական ընկերություն՝ HUIYUAN-ը մշակում և արտադրում է օդային էլեկտրահաղորդման գծերի մոնիթորինգի

նորարարական համակարգ՝ իր սեփական հնարավորություններով, որոնք ընդգրկում են արտադրության բոլոր փուլերը՝ սկսած սկզբնական հումքից մինչև պատրաստի արտադրանք: HUIYUAN-ի օպտիկական մանրաթելային մալուխը և մոնիթորինգի համակարգը մեծ համբավ են վայելում ոչ միայն Չինաստանում, այլ նաև տարածված են ԵՄ-ում, Նոր Զելանդիայում, Կանադայում, Հարավարևելյան երկրներում՝ Մալայզիայում, Սինգապուրում և այլուր:

- ✓ Պոլիմերային մեկուսիչներ, ապակե մանրաթելային ձողեր, մետաղական կցամասեր արտադրող China Energy and Chemical Industry Co.Ltd ընկերության ներկայացուցիչների հետ,
- ✓ մեկուսիչների արտադրման սարքերով մասնագիտացված Dekuma Rubber & Plastic Technology (Dongguan) Ltd ընկերության ներկայացուցիչների հետ: Նշված ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկվել են նրանց հաջողված փորձի հնարավորությունները:

7. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Միջազգային տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ ընդգծել են իրենց գործունեության իրական հնարավորությունները՝ բարձր մրցունակությունը, արհեստավարժությունը, մեծ փորձը: Ծավալված քննարկումների ժամանակ առաջարկվել են հետաքրքիր և միևնույն ժամանակ բավականաչափ կիրառելի լուծումներ, փոխանակվել են ոլորտային արժեքավոր գիտելիքներ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների արդյունքներով փաստաթուղթ չի ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Առաջարկվում է զարգացնել փոխշահավետ գործընկերային հարաբերություններ, մոտ ապագայում քննարկել նշված ընկերությունների հետ համագործակցության հեռանկարները:

---

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Recoverable Signature

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ
3409750096

X

2025-04-14 16:12:21 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ/Գի կողմից

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Signed by: MIRZOYAN DAVIT 3409750096

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

14.04.2025ج.